ԱՇՈՏ ԳԱԼՍՏՅԱՆ

ՎԱԶԳԵՆ Ա. ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿԵՐՊԱՐԱԿԵՐՏՄԱՆ ԼԵԶՎԱՌՃԱԿԱՆ ԴՐՍԵՒՈՐՈՒՄՆԵՐԸ ՀՈՒՇԱՅԻՆ ԴԻՄԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ

Վազգեն Առաջին Կաթողիկոսի անունը ոսկե տառերով է դրոշմվել Հայ Եկեղեցու եւ մեր հայրենիքի պատմության մեջ: Հոգեւոյս Կաթողիկոսին նվիրված հուշագրության հեղինակները պատեհություն են ունեցել անձնապես շփվելու Վեհափառի հետ: Այդ կերպարագծումներն արտացոլում են երանաշնորհ Հայրապետի ներաշխարհի խորությունը, նրա ջերմ հայրենասիրությունն ու եկեղեցանվիրումը:

Գեղարվեստական վավերագրության այս տեսակը՝ հուշային դիմանկարը, ամփոփում է դրվագներ Վազգեն Վեհափառի մեծ կենսապատումից, ունի գրական-պատմական մեծ արժեք եւ աչքի է ընկնում լեզվառճական ինքնատիպ դրսեւորումներով: Տողերի միջից կարծես զգում ես Վեհափառի խոսքի հարստությունն ու բազմերանգությունը, եւ հիշողության մատյանում վեր է հառնում նրա առինքնող դիմանկարը. *«...Կա մեկը, որ առանձնանում է այս լուսարձակ պատկերասրահում, ինչպես Թորոս Ռոսլինի ձեռքով մանրանկարված սրբապատկերը կառանձնանար շրջակա դիմանկարների մեջ: Դա Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինն է, որը բոլորովին նոր երանգ, նոր գույն է բերում ոչ միայն իմ, այլեւ ողջ Հայաստանի, մեր ողջ ժողովրդի կյանքում»* (Սիլվա Կապուտիկյան)[1]: Շատ հաճախ արտաքին հատկանիշները շաղախվում են բնավորության ներքին գծերին՝ ամբողջացնելով դիմանկարի էությունը. *«Նրա ներշնչված դեմքին անսահման խաղաղություն կա, զարմանալի վճիռ աչքերում՝ անսպառ բարություն, որ շոայլում է համայն հայությանը, բոլորին, առանց սպասումի երկյուղի»* (Վարդուհի Վարդերեսյան. էջ 33):

Հուշագրության մեջ տեսանելի է հեղինակը. նա է հանդիպում Վեհափառին եւ մյուս հերոսներին, զրուցում նրանց հետ, դատողություններ անում: Այս առումով զգալի ակտիվություն ունի առաջին եւ երրորդ դեմքի անձնական դերանունների գործածությունը. «**Ես** եղա ականատեսը եւ մասնակիցը այդ մեծ ծառացումի» (էջ 238): Այդ օրը նշանավորվեց նաեւ ծանոթությամբ այն անձնավորության հետ, որը հետագայում պետք է դառնար Ամենայն Հայոց Կաթողիկոսը, **մե՛ր** Կաթողիկոսը» (էջ 222): **Նրա** կերպարանքում, **նրա** իմաստնության մեջ Սողոմոն թագավորից ինչ-որ բան կար» (էջ 290):

1 «Ապրել գալիքի տեսիլքով. Վազգեն Ա. Երջանկահիշատակ Հայրապետի ծննդյան 100-ամյակին» (Հուշեր Վազգեն Վեհափառի մասին), կազմեց Ա. Մաղոյանը, Ս. Էջմիածին, 2008, էջ 221: Այսուհետեւ՝ հղումները շարադրանքի մեջ:

Հուշային դիմանկարները հյուսված են լեզվառճական տարբեր ենթաշերտերից: Այստեղ գրական հայերենը հնչում է արեւելահայ եւ արեւմտահայ ոճերի նրբին ու տեղին համադրումով. «Այո՛, մենք պետք է շինենք մեր հայրենիքը, շինենք Երեւանը եւ ինչո՞ւ չէ, պետք է շինենք մեր Կարսն ալ, մեր Վանն ալ, Մուշն ալ, Բիթլիսն ալ...» (էջ 233):

Հուշագրության կառուցվածքային մասերից է երկխոսությունը՝ որպես մտքի մատուցման եղանակ: Այստեղ ստեղծվում է զրույցի միջավայր՝ հարցուպատասխանական կաղապարով.

«- Ես որչափ փոխված ես, Վարդուհի՛:

- Հարկավ փոխված պիտի ըլլամ տասնհինգ տարիէ ետքը, սրբազա՛ն:

- Ե՞րբ դարձար հայրենիք:

- 1946-ին, առաջին շոգենավով:

- Հիմա ի՞նչ կ՚ընես:

- Լենինականի թատրոնում դերասանուհի եմ:

- Օ՛, ի՞նչ կ՚ըսես» (էջ 36):

Երկխոսության կազմիչ նախադասությունների երանգային զուգորդումների մեջ որոշակի տեղ ունի «հարցում-հարցում» կառույցը, այսպես՝

«- Բա մեր ժողովրդին չե՞ս հրավիրում:

- Ո՞վ է քո ժողովուրդը:

- Էլ ո՞վ՝ Կաթողիկոսը» (էջ 86):

Երկոսություններում գործածվում են տարբեր դիմելաձեւեր, որոնք երբեմն ընդրում է հեղինակը. «*Չգիտեի ինչպես դիմել: Դարոն Պալճյան չէի կարող ասել պատկառելի մի հոգեւորականի, որ հիմա կանգնած էր իմ դիմաց: Դիմեցի հոգեւոր հայրերին դիմելու ընդունված բառով.*

«- Բարի ողջույն, սրբազա՛ն:

- Բարեւ՛, աղջի՛կս» (էջ 36):

Երբեմն հուշագրական արձակը հյուսվում է ինքնահարցադրումով, որին եւ հետեւում է պատասխանը. «*Մարդ մը, միս մինակը, ինչպե՞ս եւ ինչո՞վ կրնայ իրագործել այդ հրաշքը: Ուժո՞վ. ոչ, ուժի խնդիր մը չէ... Խելքո՞վ. ոչ մեկ իմաստուն Սողոմոն պիտի կրնար խելք բանեցնել պատահածին:*

Ինչո՞վ: Բայց ինչո՞վ կատարուած են ու կը կատարուին մարդկային մեծագործությունները, եթէ ոչ հաւատով» (էջ 172):

Հայտնի իրողություն է, որ հայերենը հատկանշվում է բառակազմական լայն հնարավորություններով, որոնց բազմաթիվ դրսեւորումների հանդիպում ենք հուշագրության լեզվում:

Բնագրերում նկատելի է **հոգի** բաղադրիչով կազմությունների առատություն՝ **հոգեշնորհ** (Վանքի ուխտաւորների տպաւորութիւնների մատեանում... կան *հոգեշնորհ* վարդապետի նշումները) (էջ 51), **հոգեհաճ** (Տարեդարձը նշանավորվեց նաեւ ինձ համար խիստ *հոգեհաճ* մի ձեռնարկով) (էջ 228), **հոգեկից** (Էլ չեմ խոսում...Վեհափառի *հոգեկից* բարեկամ Գրիգոր Խանջյանի եւ շատ ուրիշների մասին) (էջ 229), **հոգենորոգ**

(Այդ «շատ բանը» միայն...ժողովրդի սերն ու մեծարանքը վայելելու *հոգևորոց* լիացումը չէ) (էջ 221), **հոգեզավակ** (Մի օր ծերունազարդ մի կին գնացել է Կոստանցայի հայ ոսկերիչներից մեկի մոտ եւ ասել, որ ինքը Օրմանյան պատրիարքի *հոգեզավակն* է) (էջ 106), **հոգեհանգիստ** (...Եկեղեցու սպասավորների եւ բարերարների հիշատակին նվիրված *հոգեհանգիստ* ենք կատարելու) (էջ 105), **հոգեղարձ** (...Իմ *հոգեղարձի* հաւատամքն անեմ...) (էջ 263), **հոգեցունց** (Հայոց խորհրդարանում մի *հոգեցունց* մեղեդի հնչեցրեց շեփորը): Գործածության մեծ հաճախականություն ունեն նաեւ հետեւյալ բաղադրիչներով կազմությունները՝ **ազգ** - ազգընտիր (էջ 53), ազգաշեն (էջ 56, 268), ազգօգուտ (էջ 123), ազգամերժ (էջ 222), օտարազգի (էջ 228), **Աստված** - Աստվածամայր (էջ 45, 231), Աստվածածին (էջ 51), աստվածասեր (էջ 23), աստվածակառույց (էջ 53), աստվածարյալ (էջ 61), աստվածատես (էջ 20), աստվածակերպ, աստվածաշնորհ (էջ 192), աստվածահաճ (էջ 260), աստվածաբան (էջ 211), **գիր** - հիշատակագրություն (էջ 49), ձայնագրություն, մեհենագիր (էջ 167), փորագրանկար (էջ 194), ձեռագիր, գրասեղան (էջ 195), օտարագիր, վիպագիր (էջ 214), մատենագիր (էջ 232), գրչագիր (էջ 246), **եկեղեցի** -եկեղեցանվեր (էջ 53), եկեղեցաշեն (էջ 56), եկեղեցասեր (էջ 48), միջեկեղեցական (էջ 64), **հայ** - հայապատկան, հայակնիք (էջ 239), հայաշատ (էջ 209), հայաբույր (էջ 207), հայագետ (էջ 47), հայանկար (էջ 231), հայամերժ (էջ 276), հայապահպանություն (էջ 28), կովկասահայ (էջ 224), վիրահայ (էջ 57), ամերիկահայ (էջ 254), ռումինահայ (էջ 107), հունահայ (էջ 41), բուլղարահայ (էջ 108), ֆրանսահայ (էջ 129), լիբանանահայ (էջ 284), բեյրութահայ (էջ 228), պոլսահայ (էջ 226), արեւելահայ, արեւմտահայ (էջ 249), սփյուռքահայ (էջ 224), գաղութահայ (էջ 137), **հուշ** - հուշահանդես (էջ 28), հուշաշխարհ (էջ 225), հուշագիր (էջ 131), հուշարձան (էջ 239, 251), հուշանվեր (էջ 55), յուշագրոյց (էջ 281), **մեծ** - մեծարժեք, մեծակշիռ (էջ 153), մեծանուն (էջ 229), մեծամեծ (էջ 279), մեծահոչակ (էջ 280), **նոր** - նորընծա (էջ 59, 167, 264), նորընտիր (էջ 61, 222), նորանկախ (էջ 242), նորահարս (էջ 272), նորաբեղ (էջ 228), նորանոր (էջ 223), **պետ** - վարչապետ, սպարապետ (էջ 278), հայրապետ, դիվանապետ, արարողապետ (էջ 137), վեհապետ (էջ 194), հովվապետ, ազգապետ (էջ 79), վարդապետ (էջ 48), կրոնապետ (էջ 121), քահանայապետ (էջ 216), ատենապետ (էջ 41), սեղանապետ (էջ 79), ճարտարապետ (էջ 142), վարժապետ (էջ 145), լուսարարապետ, նվիրապետական (էջ 57), հրեշտակապետաց (էջ 45), **սեր** - էջմիածնասիրություն, եկեղեցասիրություն, հայրենասիրություն (էջ 79), ազգասիրություն (էջ 103), բանասեր (էջ 246), հայասեր (էջ 105, 108), մարդասեր (էջ 249), առաքինասեր (էջ 281), կրթասեր (էջ 280), հարցասեր (էջ 166), կենսասեր, ընկերասեր (էջ 224), արվեստասեր (էջ 229), բարեսիրական (էջ 133), սիրայօժար (էջ 280), **վանք** - Մայրավանք (էջ 26), Դպրեվանք (էջ 27), Լմբատավանք (էջ 219), Մակարավանք (էջ 251), վանքապատկան (էջ 210), վանահայր (էջ 57), վանական (էջ 216), **վեհ** - Վեհափառ (էջ 102), Վեհամայր (էջ 103), վեհաքայլ (էջ 262), վեհարան (էջ 106), **տուն**-առանձնատուն (էջ 230, 243, 244), գանձատուն, ձեռագրատուն (էջ 280), զանգակատուն (էջ 262), նամակատուն (էջ 168):

Վազգեն Առաջին Կաթողիկոսին նվիրված հուշերում մեծապես գործածվում են

նաեւ կրոնաեկեղեցական լեզվական միավորներ, այսպես՝ վանքերի, եկեղեցիների, փաճարների անուններ՝ Ս. Էջմիածնի Մայրավանք (էջ 24), Ս. Գայանե վանք (էջ 62), Ս. Գեղարդ վանք (էջ 57), Խոր Վիրապի վանք (էջ 26), Տաթեւի վանք (էջ 251), Անթիլիասի մայրավանք (էջ 64), Հաճկատարի վանք (էջ 40, 55), Սուրբ Ծողակաթ եկեղեցի (էջ 26), Սուրբ Սարգիս եկեղեցի (էջ 225), Ս. Խաչ եկեղեցի, Ս. Սիմէոն եկեղեցի (էջ 42), Ամենափրկիչ եկեղեցի, Աստվածածին եկեղեցի (էջ 262), Ս. Համբարձման եկեղեցի (էջ 80), Ս. Փրկիչ եկեղեցի (էջ 80), Բուիխարեսպի Ս. Հրեշտակապետաց եկեղեցի (էջ 45), Էջմիածնի Մայր փաճար (էջ 20), Միածնաէջ փաճար (էջ 282), Երուսաղէմի Ս. Յարութիւն փաճար (էջ 122), Վատիկան. Ս. Պետրոսի փաճար (էջ 208), Փարիզի Աստվածամոր փաճար (էջ 209) եւ այլն:

Եկեղեցական զգեստների անուններ՝ թասակ (էջ 84), վեղար (էջ 130), կնգուղ (էջ 197), հայրապետական քող (էջ 280), սքեմ, պարեգոտ (կապա. էջ 207), սեւ գլխարկ (թասակ. էջ 219), փարաջա (էջ 195), եկեղեցական վերարկու (էջ 267), դրվագազարդ գավազան (էջ 290):

Նվիրական առարկաների անուններ. որպես պատվո նշան քահանայական կարգ ունեցողներին շնորհված իրեր՝ լանջախաչ (էջ 101), եպիսկոպոսական մատանի (էջ 106), պանակ (էջ 267), ձեռաց խաչ (էջ 109):

Կրոնական գրքերի անվանումներ՝ Սուրբ Գիրք, Աստվածաշունչ (էջ 214), Ավետարան (էջ 21), Նոր Կտակարան (էջ 90), Յայսմաւուրք (էջ 50), «Վեհամոր Աւետարան» (էջ 281):

Կրոնապետերի կացարան-նստավայրերի՝ տեղի իմաստ արտահայտող *-արան* վերջածանցով անվանումները՝ կաթողիկոսարան, վեհարան, պատրիարքարան, առաջնորդարան:

Զգալի կենսունակություն ունեն *-ական* վերջածանցով ածականները *(-ական*-ը պարսկերենից փոխառյալ ածանց է). *վեհափառական* իմաստություն (էջ 64), *հայրապետական* օծում (էջ 25), *հովվապետական* այց (էջ 65), *էջմիածնական* վարդապետներ (էջ 25), *անթիլիասական* դեպքեր (էջ 67-68), *սարոյանական* նվեր (էջ 128), *միկոյանական* ոճ (էջ 161), *Մարդասիրական* վարժարան (էջ 226), *հորենական* տուն (էջ 127), *հայրական* ջերմություն (էջ 22), *միաբանական* կյանք (էջ 91), *պապենական* հողեր (էջ 94), *թեմական* խորհուրդ (էջ 101), *զատկական* տոներ (էջ 103), *թաղական* խորհուրդ (էջ 106), *հայկական* եկեղեցի (էջ 109), *բրագիական* թղթադրամ (էջ 110), *կրոնական* սրբատեղի (էջ 147), *եկեղեցական* զրուցակից (էջ 259), *հերոսական* Արցախ (էջ 261), *վանական* միջավայր (էջ 216), *որդիական* վերաբերմունք (էջ 215), *վարդապետական* քառասունք (էջ 44), *աթեիստական* երկիր (էջ 216), *նվիրական* հուշ (էջ 171), *վավերական* հուշ (էջ 152), *տիպական* հավատ (էջ 191), *հավերժական* ներկայություն (էջ 219), *վեհական* պետ (էջ 157) եւ այլն:

Հաճախադեպ գործածություն ունեն **հիշում եմ (հիշում է), վերհիշում եմ** բայաձեւերը. «Այսօրվա պես հիշում եմ այն օրը, երբ այս զեղեցիկ անակնկալը ինձ

մատուցեց Վեհափառը» (էջ 231). «Այժմ *չեմ հիշում*՝ ինքն էր ցանկություն հայտնել ինձ տեսնելու, թե ես էի տեսակցություն խնդրել, միայն *հիշում եմ*՝ ...Էջմիածին ուղեւորվեցինք Կաթողիկոսարանից ուղարկված մեքենայով» (էջ 226). «Դրանից յետոյ չեմ *յիշում*, Վարպետը մէկ էլ եկաւ Ս. Էջմիածին, թէ այդ իր վերջին այցն էր, վերջին ուիտը, վերջին պարտքը» (էջ 268). «Ես հաճախ *վերհիշում եմ* Վեհափառի դասերը...» (էջ 291). «*Յիշում է* եւ Ինքը» (էջ 284):

Այս բայաձեւերի գործածությունը հուշագրության մեջ բնական է, որովհետեւ հուշագիրները վերհիշում են անցյալը, թղթին հանձնում Վեհափառի իմաստուն պատգամները:

Երբեմն հուշագրողը թերթում է իր հիշողության մատյանը՝ **եթե հիշողությունս չի դավաճանում** նախադասությամբ. «Այդ դեպքից անցել է 40 տարի. *եթե հիշողությունս չի դավաճանում*, հունիսի կեսերին էր, որ Մասաչուսետս նահանգում գտնվող Հարվարդի համալսարանի ղեկավարության խնդրանքով Հայոց Հայրապետը համաձայնություն տվեց այցելելու համալսարան» (էջ 68):

Ուշագրավ է **տաղավար** բառիհաճախակիգործածությունը,որժամանակակիցների հիշողության մեջ ամրողջացել է **կաթողիկոսի տաղավար** արտահայտությամբ: Դա հանգստանալու, լուռ մտորելու, հյուրեր ընդունելու սիրված վայր է եղել. «Ամառվա շոգերի պատճառով Վեհափառն ինձ ընդունեց այգու իր տաղավարում» (էջ 248): «Ընթրիքից յետոյ հին Վեհարանի բակում մտերմաշունչ տաղաւարի մէջ էինք, Վեհափառի կողքին» (էջ 267):

Հուշային դիմանկարները հարուստ են շրջասական կապակցություններով, որոնցով երեւում է հուշագիրների անձնական վերաբերմունքը Վեհափառի հանդեպ. այսպես՝ **Վազգեն Ա. Կաթողիկոս** - Մեծ մենակյաց (էջ 225), Լուսամիտ գահակալ (էջ 21), Շինարար Հայրապետ (էջ 23), Աստվածարյալ դիվանագետ (էջ 98), Ընտրյալ անձնավորություն (էջ 225), Խաղաղության մարտիկ (էջ 289), Էջմիածնի թագավոր (էջ 116), Շնորհազարդ Հայրապետ (էջ 27), Վազգեն Բուխարեստցի (էջ 261), Ազգային հերոս (էջ 112):

Վազգեն Առաջինին նվիրված հուշագրություններում հանդիպում են նաեւ այլ շրջասություններ՝ **Մեսրոպ Մաշտոց** - *Մեծ Տարոնցի* (էջ 93), *Օշականի անհուն մեռեալ* (էջ 275), **Ավետիք Իսահակյան** - *Ամենայն հայոց վարպետ* (էջ 266), **Վիլյամ Սարոյան-Վիկտոր Համբարձումյան-Վազգեն Առաջին** - *20-րդ դարի երեք մեծ հասակակիցներ* (էջ 286), **Լուսինե Զաքարյան** - *հոգով-սրտով Աստծուն նվիրյալ* (էջ 236), **Սիլվա Կապուտիկյան** - *Հայաստան երկրի դուստր* (էջ 221), **Ալեքսանդր Հարությունյան** - *նուրբ մեղեդիներու երաժիշտ* (էջ 167), **Օհան Դուրյան** - *մանուկ մի հսկայ* (էջ 282), **Սիրանույշ Պալճյան** - *անմոռանալի Տիրամայր* (էջ 48), **Աստվածաշունչ** - *թագուհի թարգմանութեանց* (էջ 46), *սրբազան մատյան* (էջ 93), **Սուչավայի վանքը շրջապատող բլուրը** - *Ողորմության բլուր* (էջ 51), **Գեղարդ** - *հավատքի եւ ստեղծագործ ոգու եզակի խորհրդանիշ* (էջ 154), *հրաշք՝ ծնված քարի ներսում* (էջ 191), **Էջմիածին** - *հայ հավատի պուն* (էջ 222), *հավատի*

խորան (էջ 147), **Մայր Աթոռ** - *ազգապահպահության կենտրոն* (էջ 128): Ի դեպ, Էջմիածինը բնորոշվում է նաև այլ բնութագրիչներով՝ «*մեր ազգային արեւածագին ու մայրամուտներուն ընթացքը ճշտող գլխաւոր միջօրէական*», «*դարերէն եկող եւ մեզ գալիք դարերուն կապող յոյս*» (էջ 147):

Հուշագրությունների լեզուն հարուստ է դարձվածքներով, որոնք վերաիմաստավորված փոխաբերական-այլաբերական դրսեւորում ունեն:

Ամոթից գետինը մտնել «շատ ամաչել (տհաճ, վատ արարքի համար)» - Անհարմար չէ՞ր... Ինչպե՞ս կարելի է այդ սուրբ մարդուն անհանգստացնել: Ես ամոթից գետինը մտա... (էջ 236): **Աչքերը փակել, բերանը բացել** «բարկացած՝ իրեն կորցրած խոսել, ծանր խոսքեր ասել» - Բազկաթոռին հագիվ տեղավորված կրտսեր գրչընկերուհիս աչքերը փակեց, բերանը բացեց (էջ 235): **Աչքի լույսի չափ** «չափազանց շատ» - Աչքի լոյսի չափ կը գնահատէ հայ ձեռագիրները (էջ 97): **Ասպղերը բռնել** «իրար հավանել, բարեկամանալ» - Հանդիպել էին, եւ ինչպես հայերն են ասում, երկուսի ասպղերը բռնել էին. բարեկամացել էին, մտերմացել (էջ 126): **Լեզու գտնել** «համաձայնության գալ» - Նրանց հետ ավելի շուտ կարելի է լեզու գտնել (էջ 222): **Սեղանի գլխին լինել** «հարգանքի արժանանալ» - Մայրս, որ մշտապես մեր սեղանների գլխին էր լինում, իր տեղը զիջեց Կաթողիկոսին (էջ 227): **Սիրտ անել** «համարձակվել» -Բաբկենը ներքուստ որոշում է կայացնում եւ սիրտ անելով դիմում հյուրերին (էջ 199): **Սրտի մարդ** «սիրելի, ցանկալի անձնավորություն» - Վեհափառ Հայրապետը...ապացուցանեց, որ Ան առաւելագանցօրէն սրտի մարդ էր» (էջ 92): **Շուրթից շուրթ հաղորդվել** «լուրը (պատմությունը, զրույցը) տարածվել» - Ես այդ պատմությունը բազմիցս լսեցի նաեւ ուրիշներից. բանահյուսության նման շուրթից շուրթ է հաղորդվում (էջ 198):

Հուշապատումներում մեծ է համեմատությունների կշիռը: Դրանք հյուսվում են մի առարկան կամ երեւույթը մյուսին նմանեցնելու, հավասարեցնելու հնարքով՝ խոսքի գեղագիտական արժեքը բարձրացնելու նպատակով: Համեմատություններում սովորաբար ընդգծվում է համեմատվող առարկաների համար ընդհանուր հատկանիշը, որի հիման վրա կատարվում է նրանց համադրումը. «*Կը քալեմ ու կը լսեմ, բայց մէջընդմէջ մտածումս փախուստ կու տայ ժամանակին մէջ դէպի ետ, ու մոլորած թռչունի մը պէս կը թեւաբախէ՝ չգիտնալով ընելիքը ու չգտնելով իր թառը...*» (էջ 145):

Համեմատությունները սովորաբար կազմվում են երեք բաղադրիչներից՝ համեմատելի-համեմատություն-համեմատության հիմք: Այս նմուշում համեմատության բաղադիրչը կրկնությամբ է հանդես եկել. «*Մաղթեց, որ Դուք դառնաք Մասիսի պէս մեկ, Մասիսի պէս վեհ, Մասիսի պէս խրոխտ*» (էջ 252): Միեւնույն նախադասության մեջ կարող է դիտարկվել համեմատության երկու տեսակ. «*Միտ, մեռոնը կարմիր չի լինում այս գինու նման, դեղին է լինում, հալած արդար խոի պէս*» (էջ 271): Որոշ համեմատություններ կառուցվում են մեկից ավելի հատկանիշների հիման վրա, որոնք, սակայն, կարող են լինել անսպասելի եւ ոչ հիմնական:

Հուշագրական արձակի տեխնիկան զարգացնելու մղումով հեղինակները երբեմն

գործածում են իմաստախոսություններ, որոնք խտացված ասույթներ են, փիլիսոփայական մտքեր կյանքի վերաբերյալ. «*Եթե դեմքը սրտի հայելին է, ապա խոսքը գալիս է սրտից*» (էջ 57). «*Կարոտը սահման չունի. կարոտը տիեզերական է*» (էջ 127). «*Չյունը բարձունքները կսիրե*» (էջ 139). «*Չիք չարիք առանց բարեաց*» (էջ 249). «*Իսկական բարությունն այնտեղ է, որտեղ կա մարդկային բարի սիրտ*» (էջ 193). «*Գրքերը, ինչպես եւ մարդիկ, թափառումներից հետո թակում են հայրենի տան դուռը*» (էջ 201). «*Յաճախ մարդիկ կուլան իրենց ներսէն, բայց ցոյց չեն տար*» (էջ 95). «*Ասածուն ապավինի՛ր, բայց ինքդ մի՛թուլացիր*» (էջ 288): Երբեմն հուշագրական պատումը ամբողջանում է հայտնի մարդկանց խորիմաստ ասույթներով. դրանք կարող են բնագրին հաղորդել արտահայտչական երանգավորում. «*Ապրողազարդ երկինքը գլխուս վերեւ ու բարոյական օրենքը սրտիս մեջ*» (Կանտ. էջ 212): Ներկայացվում են նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի մտքերից, որոնք ժամանակի մեջ մեծակշիռ խոսքի ուժ են ունեցել. «*Եթե դուք չլսեք ձեր Հայրապետին..., ես կանիծեմ իմ բախտը եւ կլռեմ հավիտյան*» (էջ 240):

Պատկերավորման այս միջոցները գալիս են ամբողջացնելու Շնորհազարդ Հայրապետի դիմանկարը, որ հաճախ է կերտվում փոխաբերությամբ, որը գեղարվեստական վավերագրության առանձնահատուկ հատկանիշներից է: Երբեմն պատկերավորությունն ուժեղացնելու նպատակով նույն նախադասության մեջ կարող են գործածվել մեկից ավելի փոխաբերություններ. «*Ինչպես կարող էի չճանաչել նրա աչքերը, որոնցից բարություն էր կաթում ու լցվում դիմացինի սիրտը*» (էջ 36): Յուրահատուկ ձեւով է հուշագրողը ներկայացնում Վեհափառի մազերի ճերմակությունը. «*Մեր բիբլիական լեռան գագաթի կուսական ձյունն է իջել Նրա խմաստուն գլխին*» (էջ 33):

Որոշ հուշափաստեր ունեն նաեւ աղբյուրագիտական արժեք, որոնք երբեմն կարող են դիտարկվել իբրեւ գիտական մեկնաբանություններ. «*Սուչավան հանդիսացել է ռումինահայության մի տեսակ Անի քաղաքը: Այն եղել է միաժամանակ ոչ միայն գաղութի հնագույն, այլեւ խոշորագույն կենտրոնը: Այստեղ է, որ հայերը ստեղծել են ավելի քան 13 եկեղեցիներ ու վանքեր: Սուչավայի մոտ է գտնվում ոչ միայն Ռումինիայի, այլեւ Արեւելյան Եւրոպայի հայ գաղթավայրերի հոչակավոր ուխտատեղին՝ Հաճկատարի Ս. Աստվածածնի վանքը, որը կառուցվել է 1512 թվականին... Նրա դարավոր կամարների տակ իր վարդապետական քառասունքն է անցկացրել Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինը*» (էջ 40):

Ուշագրավ է Վազգեն Վեհափառի հոգեւոր անվան պատմությունը (Վազգեն անունը կնքել է Մագլամեան Դարապետ սրբազանը): Հիշում է Վեհը ու հետեւյալ վկայությունը տալիս. «*Վանի ինքնապաշտպանութեան հայդուկներէն էր Վազգէն անունով քաջարի երիտասարդ մը: Հերոսամարտի մը ընթացքին սպանուեցաւ: Թուրքերը հերոս երիտասարդին դիակը տունէ տուն պտըտցուցին՝ գտնելու համար անոր ընտանիքը պատժելու կամ վնասելու միտումով: Երբ Վազգէնի*

մայրը, շրջապատուած փեսեցներով, կը տեսնէ իր անշնչացած որդիին դիակը, կը յայտնէ թուրք զինուորներուն, թէ չի ճանչնար անոր ով ըլլալը: Գիտէք, որքան քաջութիւն պէտք էր մօր մը համար այդպիսի կեցուածք մը ցուցաբերելու: Այդ անկրկնելի զոհաբերութիւնը ըրաւ փրկելու համար ընդանիքի միւս անդամները» (էջ 85-86):

Գեղարվեստական վավերագրության այս տեսակը՝ հուշային դիմանկարը, անշուշտ, գեղարվեստի ծիրում է: Իբրեւ անցյալի վրա լույս սփռող վավերագիր՝ այն առանձնանում է ոճային, պատկերային, գունային ու լեզվական նրբերանգներով եւ իրավամբ ունի պատմական-վավերական արժեք: Մեջբերվող հատվածում տեսանելի են գեղարվեստական գյուտերը. *«Գիշեր է ամէնուրեք, նաեւ Մայր Աթոռում, բայց լուսնի լոյսը ծառերէն ծաղիկի պէս է կախուեր, կաթնաձիր, խաղաղ, հրաշալի գիշեր: Մայր Տաճարն ասես հիմնովին գետնից կտրուել ու կախուել է երկնքից: Գրիգոր Լուսաւորչի երա՞գն էր կրկնում...: Լուռ էր Վեհափառը, աւելի վեհացած, աւելի ոգեղինացած: Մէկ-մէկ դէմքը դարձնում էր դէպի երկինք, ասես բանաստեղծութիւն խմելու համար. «Լուսնակն անո՛ւշ, հովն անո՛ւշ»: Չիսօսողը Վեհն է, ես պարզապէս չեմ համարձակւում ընդմիջել լռութիւնը... Վեհը լռութիւն է լսում...»* (**Փայլակ Փ. Անթաբեան**. էջ 268-269):

Վեհափառ Հայրապետի հանդիպումները ժամանակակիցների հետ, անշուշտ, հուզիչ եւ խորիմաստ դրվագներ են հայրենասիրության ու հայեցիության: Դրանցում յուրովի դրսեւորվում են Վազգեն Ա. Կաթողիկոսի կերպարի էությունը, ոգին ու նկարագիրը: